

## ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

### ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ «ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐ Է» ԳՐՔՈՒՄ\*

**Բանալի բառեր:** Ցեղասպանություն, պատմամշակութային հուշարձաններ, Արցախյան շարժում, վիճելի տարածքներ, խաչքար, ՄԱԿ, արտագաղթ, քաղաքակրթության բնօրրան, վերակառուցում, պատմական շրջաններ:

Նախիջևանը հանդիսանում է Հայոց հայրենիքի հերթական կորուստներից մեկը, որը տեղի է ունեցել 20-րդ դարի սկզբին, անարդար ճանապարհով: Խորհրդային տարիներին՝ իհարկե, ոչ Նախիջևանը, ոչ էլ մյուս հայկական կորուստները չէին կարող համապատասխան ուշադրության արժանանալ և լուսաբանվել: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո՝ ժողովրդավարության պայմաններում, Հայ պատմաբանների համար բացվեցին գործունեության լայն հնարավորություններ, ընդլայնվեց նրանց ուսումնասիրությունների շրջանակը: Հայ հեղինակները ձեռնամուխ եղան հայ ժողովրդի պատմության՝ մինչև այդ նվազ կամ քիչ հետազոտված թեմաների համալիր ուսումնասիրությանը: Նման կարևոր թեմա է հայկական Նախիջևանի պատմության համակողմանի լուսաբանումը:

Հայկական բարձրավանդակի ու Հայաստանի բնական մաս կազմող Նախիջևանը կտրված է Հայաստանի Հանրապետությունից և ներկված քաղաքական այն գույնով, ինչ գույնով ներկված է Ադրբեջանի Հանրապետությունը: Այն որ Նախիջևանը աշխարհագրորեն, պատմական, տնտեսական ու մնացյալ առումներով Հայաստանի մաս է կազմել՝ հայտնի ճշմարտություն է:(1) Պատմական Հայաստանի Նախիջևան գավառը աշխարհագրական իր դիրքով Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում ունեցել է բացառիկ կարևոր նշանակություն՝ կապելով Արարատյան դաշտը Իրանի ու արևելքի այլ երկրների հետ և վճռորոշ դեր է խաղացել Հայաստանի պատմության ողջ ընթացքում, ինչպես անկախ պետականության պայմաններում, այնպես էլ օտար տիրապետության ներքո լինելու պարագայում:(2)

Նախիջևանը և նրա գավառները հայ մշակույթի, ճարտարապետության, կիրառական արվեստի, ինքնատիպ ազգային ավանդույթներով հարուստ երկրամասերից է: Այս լեռնաշխարհի հայկական ցեղերի մախահայրերը բնակվել են թերևս անհիշելի ժամանակներից ի վեր, սերնդե-սերունդ կերտել, արարել, դարերին են ավանդել իրենց գոյության ու լինելիության վկայարանները՝ բազմաթիվ հնագույն պատմաճարտարապետական հուշարձաններ, քաղաքներ, գյուղեր, ամրոցներ:(3) Եվ չնայած այդ ամենին՝ Ադրբեջանի պատմաբանները փորձում են ապացուցել, որ Նախիջևանը միշտ էլ եղել է Ադրբեջանի կազմում: Ինչը ևս մեկ

\*Հոդվածն ընդունվել է 10.06.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի պատմության ամբիոնը:

անգամ պարտավորեցնում է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել և գիտական առանձնակի ուշադրության արժանացնել Նախիջևանի խնդրին: Նախիջևանը խորհրդայնացվել է 1920թ. հուլիսի 28-ին: 1921թ. մարտի 16-ին ռուս-թուրքական պայմանագրով այստեղ կազմավորվել է ինքնավար մարզ՝ խորհրդային Ադրբեջանի կազմում, 1923թ. փետրվարին ինքնավար երկրամաս, 1924թ. փետրվարի 9-ին ինքնավար հանրապետություն տարածքը՝ 5.3 հազ. քառ. կմ, բնակչությունը՝ 256 հազ.մարդ:

Հայտնի հրապարակախոս Ջ. Բալայանը մեծ ցավով է խոսում Նախիջևանում կատարվածի մասին՝ ցույց տալով մշակութային և մարդկային ցեղասպանության իրողություններ, որոնք իրենց հանգուցալուծումը գտան Արցախյան շարժման տարիներին: Սակայն, ինչպես հեղինակն է նշում, այդ բռնությունների արմատներն ավելի խորն են: Ահա պատմական Հայաստանի այս դրախտավայր երկրից է, որ 20-րդ դարի սկզբից հաջորդական աղետներով դուրս մղվեց նրա բնիկ ժողովուրդը: Առաջին մեծ աղետը տեղի ունեցավ 1905թ. անդրկովկասյան թուրքերի և հայերի լայնածավալ ընդհարումների ժամանակ: Ցարական իշխանությունների խրախուսանքով Նախիջևանում թուրքերը ավերեցին 40.000 գյուղ, սպանեցին 500-ից ավելի հայերի: Վարանդյանը իր աշխատությունում գրում է. «Ավերվածի հողմը Բաքվից անցավ Երևանի նահանգ և ամենից առաջ Նախիջևան, ուր խաները տեր ու տիրական էին, ազգաբնակչության մեծամասնությունը՝ թուրքեր: Նշենք, որ շարունակվելով 1905թ. մայիսի 12-15-ը իշխանության աչքի առաջ կկատարվեի խուժանածին զինարթուր, ջարդ, հրդեհ, կոդոպուտ, եկեղեցիների սրբապղծություն... Հայոց բոլոր ապրանքները յափշտակեցան, 182 հայկական խանութներն ազատեցան չորս հատ միայն: Հայկական հակահարվածը ևս չուշացավ, թշնամին ևս ունեցավ գրեթե նույնքան մարդկային կորուստ»:(4)

Նույն օրերի նմանատիպ իրավիճակ էր նաև բախտակից Ղարաբաղում, երկու հինավուրց խմբապետեր իրենց ձեռքն առան երկու ամենահայաշատ և վտանգված շրջանների զինվորական հիրամանատարությունը՝ Նիկոլ Դումանը՝ Երևանի նահանգում, Վարդանը՝ Ղարաբաղում:

1905-1906թթ. իրադարձությունները փոխադարձ անվստահության ու թշնամության այնպիսի սերմեր ցանցեցին, որ թեև հետագա տարիներին՝ մինչև 1917թ., լոյալ հարաբերությունները հիմնականում պահպանվեցին, բայց նաև չվերականգնվեց վստահության մթնոլորտը երկու ազգերի միջև և ամենափոքր կայծն անգամ կարող էր մեծ հրդեհի առաջացնել: Արդեն 1918թ. սկսած Թուրքիան իր իսկ ձեռքով ստեղծված Ադրբեջանի միջոցով սկսեց հայկական էթնիկ տարածքները թուրքացնելու ակտիվ քաղաքականությունը: Ինչը հատկապես դրսևորվեց Նախիջևանի, Ջանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ: 1917-18թթ. Թուրքիայի ակտիվ միջամտությունը ազգամիջյան կռիվներ սկսվեցին Շարուր-Նախիջևանում: Սկսվեց հայ բնակչության կոտորած և արտագաղթ:

20-րդ դարի 1-ին տասնամյակում Նախիջևանի գավառը բացառապես հայերով և ադրբեջանցիներով բնակեցված մի շրջան էր՝ վերջինիս թվական որոշ գերազանցությամբ: Ըստ «կովկասյան կալենդարի» 1916թ. գավառի բնակչության ազգային կազմը ուներ հետևյալ պատկերը (5)

|                 | հայ   | ադրբեջանցի | Քուրդ | հույն, ռուս և այլն |
|-----------------|-------|------------|-------|--------------------|
| Նախիջևանի Գավառ | 51365 | 69116      | 517   | 610                |
| ք.Նախիջևան      | 2665  | 6026       |       | 243                |
| Ընդամենը        | 54030 | 75142      | 517   | 853                |

Նշենք, որ Բաթունի պայմանագրից հետո իր զորաջոկատով Նախիջևան է անցնում Անդրանիկը և միանում Յերո Խարազյանին: Սակայն ի վերջո, օգոստոսին ստիպված է հեռանալ Ջանգեզուր: 1918թ. հուլիս-օգոստոսին Նախիջևանի գավառները ամբողջովին հայաթափվեցին, բացի լեռնային մի քանի գյուղերից: «Ջանգ» օրաթերթի՝ 1919 օգոստոսի 21-ի համարում ասված է թե Նախիջևանից գաղթականների թիվը՝ արևմտահայ գաղթածների հետ մեկտեղ կազմել է 80.000 (6), բայց ավելի հավաստի՝ 1919թ. խնամատարության նախարարության կազմած տեղեկագրի համաձայն, գավառում հայերի թիվը կազմում էր շուրջ 38.000 մարդ: Դրանցից մոտ չորս հազարը ապաստան գտան Գողթանի չգաղթած գյուղերում, իսկ մնացածը անցել էր Ջանգեզուր, Երևան, Թիֆլիս և այլն: Ըստ մամուլի՝ Նախիջևանի գավառում սպանվածների թիվը հասնում է շուրջ երկու հազարի:

Նախիջևանի հայության նկատմամբ ագերիներն ի սկզբանե թշնամական վերաբերմունք դրսևորեցին՝ վարկաբեկելով ու արտաքսելով սեփական հայրենիքից: Արդյունքում ստացվեց այն, որ երկրամասը հայաթափվեց: Նախիջևանում ադրբեջանական իշխանությունների հակահայ գործողությունների մի շարք հարցերի լուսաբանման է ուղղված Ջորի Բալայանի «Նախիջևանը ցեղասպանության զոհ է» գիրքը: Այս աշխատությունը ամփոփում է արժեքավոր նյութ՝ 20-րդ դարի վերջին պատմական Հայաստանի մաս հանդիսացող Նախիջևանում Ադրբեջանի հայահալած քաղաքականությունը: Գրքում Նախիջևանում տեղի ունեցող իրադարձությունները շաղկապված են նույն ժամանակաշրջանում Արցախում և Ադրբեջանի կողմից օկուպացված մի շարք այլ շրջաններում կատարված հակահայկական գործողությունների հետ: Գրքի մեծագույն արժեքը կայանում է նրանում, որ այն լուսաբանում է 20-րդ դարի վերջին Ադրբեջանի իշխանությունների բարբարոսական գործողությունները նախիջևանահայության, Նախիջևանի հայկական մշակույթի նկատմամբ՝ արդարացիորեն որակելով դրանք որպես ցեղասպանություն: Հայկական երկու ինքնավարությունները՝ Նախիջևանը և ԼՂԻՄ-ը, ստեղծվել էին 1920-ական թթ., դրանց բռնակցումը Ադրբեջանին կատարվել էր կամայականորեն՝ հաշվի չառնելով այդ տարածքների էթնիկական պատկանելության հանգամանքը: Թուրքիայի և Ադրբեջանի համար կարևոր էր այդ երկու տարածքների զավթումը, քանի որ դա կազմում էր Պանթուրքիզմի ծրագրերից մեկի՝ «օղուզականության» մի մասը, ըստ որի Թուրքիան և Ադրբեջանը պետք է միանային: Ադրբեջանը ստեղծման օրից տարածքային պահանջներ ներկայացրեց ՀՀ-ին՝ Ջանգեզուր, Նախիջևան, Ղարաբաղ: 80-ականների վերջերին տեղի ունեցող իրադարձություններն ունեն պատմական արմատներ, որոնք ձգվում են մինչև 1918-1923 թթ.: Սակայն նշենք, որ երկու հայկական տարածքների ճակատագրերը տարբեր կերպ ընթացան, եթե Նախիջևանում ագերիներին հաջողվեց հասնել իրենց նպատակներին, ապա Ղարաբաղում այլ կերպ եղավ, այստեղ հայ էթնոսը շարունակեց բացարձակ գերակշիռ մնալ և ծավալելով ազատագրական շարժում՝ հասնել փաստացի անկախության: Այստեղ կարևոր է համեմատականներ անցկացնել. ինչու՞ այդ նույնը չկատարվեց Նախիջևանում, ինչու՞ Ադրբեջանին հաջողվեց հայաթափել այս հայկական երկրամասը, ոչնչացնել հայկական մշակույթը, մի՞թե դրա կանխարգելման համար ժամանակին որևէ քայլեր չէին կատարվել: Գրքի հեղինակը, ժամանակին լինելով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, իհարկե անտարբեր չէր ոչ Նախիջևանի, ոչ էլ Արցախի ու մնացած շրջանների հայության ճակատագրի նկատմամբ, ինչպես ինքն է նշում, համագումարներում և նստաշրջաններում իր բոլոր ելույթները վերաբերում էին Նա-

խիջևանի և Ղարաբաղի ճակատագրին: 1988 թ. փետրվարի 25-ին Ձորի Բալայանը և Սիլվա Կապուտիկյանը Կրեմլում հանդիպեցին ԽՍՀՄ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի հետ և խոսեցին Նախիջևանի և Ղարաբաղի մասին: Ձորի Բալայանը նրան տեղեկացրեց, որ, լինելով ԽՍՀՄ քաղաքացի, որպեսզի մուտք գործեր Նախիջևան, տաս օր առաջ պետք է դիմեր Նախիջևանի միլիցիային, որպեսզի մուտքի վիզա ստանար: Եվ, ըստ նրա, Գորբաչովը նույնիսկ զարմացավ պատկերացում չունենալով այդպիսի երևույթի մասին: Նշենք, որ այդ քաղաքականությունը սկսվեց կիրառվել Նախիջևանի բռնակցումից հետո, այն ճանաչվեց սահմանային գոտի և այստեղ գործում էին մուտքի և ելքի խիստ կանոններ: Դա, իհարկե, այն քաղաքականության մի մասն էր, որը նախատեսում էր հայազրկել երկրամասը, թույլ չտալ այստեղ հայրենադարձների մուտքը, արգելել շփումը Հայաստանի և այլ շրջանների հայրենակիցների հետ: Այս մասին հեղինակը գրում է. «Խորհրդային ողջ ժամանակահատվածում Նախիջևանի բնիկ հայ բնակչության համար մշտապես ու կանխատեսված ստեղծվում էին կյանքի անտանելի պայմաններ: Հայ բնակչությունը զրկված էր շփումներից իր Հայաստանյան ազգականների հետ»:(7) Այս հանգամանքը իհարկե նպաստում էր հայ բնակչության արտագաղթին դեպի ԽՍՀՄ տարբեր հատվածներ: Հեղինակը ճիշտ է նկատում, որ ՄԱԿ-ի համապատասխան հոդվածների համաձայն ցեղասպանություն է համարվում նաև որևէ խմբի համար այնպիսի անտանելի պայմանների ստեղծումը, որոնց առկայությունը ստիպում է բնիկ բնակչությանը տեղահանվել: Պատմականորեն Նախիջևան գավառը Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում ունեցել է բացառիկ նշանակություն: Այստեղ ստեղծվել է հայկական հզոր մշակութային շերտ, ինչպես գրքում է նշված, այն հանդիսանում է շատ ու շատ հայ մտավորականների, արվեստագետների, զինվորականների ծննդավայր՝ Լազարյանների, Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Մանուկ Աբեղյան, Դավիթ Մայիլյան, Սերգո Համբարձումյան, Լեգենդար զորահրամանատարներ Դրո, Նժդեհ, ՀՀԴ հիմնադիրներ Միքայելյան, Ձորյան, Ջավարյան: Իսկ ահա Ադրբեջանը, որ այստեղ չունեի մշակութային որևէ հետք, լավ էր գիտակցում, որ Նախիջևանը և մյուս տարածքները հայերի մասին կարող են խոսել նույնիսկ առանց հայերի: Եվ ամբողջ յոթ տասնամյակների ընթացքում ձեռնամուխ եղան Նախիջևանը ամեն հայկականից մաքրելու գործընթացին, իսկ 80-ականների վերջերին՝ հատկապես Արցախյան շարժման տարիներին, բռնի գործողությունները այստեղ ավելի ակտիվացան:

Հարկ է նշել, որ 1917թ. Նախիջևանում բնակվում էր 53,900 հայ՝ բնակչության 40 տոկոսը, 1926թ. 11,300 հայ՝ 10.8 տ, 1970թ. 5828 հայ, 1988թ. 1500 հայ: Խորհրդային ղեկավարությունը քիչ թե շատ տեղյակ էր կատարվող երևույթներին, սակայն նրանց համար կարևորը «ժողովուրդների բարեկամությունն» էր, իսկ Ադրբեջանը այդ հարցում նրանց համար հուսալի էր: Հեղինակի նշմամբ 1988թ. փետրվարի 29-ին քաղբյուրոյի նիստի ժամանակ Գորբաչովը հայտարարեց. «Լեռնային Ղարաբաղը հայկական ինքնավարություն է, նույնիսկ Հայաստան տանող ճանապարհները բարձիթողի վիճակում են, մշակութային կապը խզված է: Դա արվել է գիտակցաբար, թուրքական հեռուստատեսության հաղորդումները ընդունվում են Լեռնային Ղարաբաղում, իսկ հայկականը՝ ոչ»:(8) Այս հայտարարությունը նա անում է այն ժամանակ, երբ նույն օրերին Սումգայիթում տեղի էին ունեցել հայկական ջարդեր: Սակայն գործնական քայլեր չձեռնարկվեցին ջարդերը դատապարտելու համար, և այդ անպատժելիությունը բերեց նոր հան-

ցանքների Բաքվում և ադրբեջանական այլ քաղաքներում: Ձ. Բալայանը գրում է. «Նախիջևանում ադրբեջանցիները շարունակում էին սպանել հայերին և միայն այն պատճառով, որ նրանք հայեր էին, ավիրել հայկական մշակույթի գլուխգործոցները, արդեն ոչ թե գիշերով, այլ՝ օրը ցերեկով: Դա իսկական ցեղասպանություն է»: (9) Հեղինակը պատմում է, որ 1990թ. սեպտեմբերին ինքը և Վիկտոր Համբարձումյանը Մոսկվայում ընդունեցին նախիջևանահայերի մի խմբի, նրանք պատմեցին, թե ինչպես այնտեղ ջարդում էին ամեն հայկականը, սպանում հայերին: Իսկ Վիկտոր Համբարձումյանը անդադար կրկնում էր. «Նախիջևանում ցեղասպանություն է, իսկ մենք հանցավոր լռություն ենք պահպանում»: Ձ. Բալայանը անշուշտ ծանոթ էր ազերիների կատարած վայրագություններին Նախիջևանում: 1976թ. Նա մեկնել է Նախիջևան, եղել է Ազուլիս քաղաքում և ակամատես է եղել կատարված հանցանքներին: Այդ մասին նա գրի է առել իր «Օջախ» գրքում. «Քսան տաճարներ և եկեղեցիներ, տասնյոթ աղբյուր: Այդ ամենը եղել է հեքիաթային քաղաքում: Այսօր ոչինչ չի մնացել: Ամեն ինչ ավերված է: Վանդալները անցան այստեղով»: (10) Հեղինակը պատմում է նաև, որ այդ օրերին Հայաստանի գրողների միությունը Նախիջևան գործուղեց գրող Բակուր Կարապետյանին, որը շուտով ներկայացրեց այնտեղ կատարվող վանդալիզմը ու նշեց որ «Քաղաքակիրթ աշխարհը լռում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ միասին»:

Արդեն նշվեց Ձ. Բալայանի ունեցած մտահոգության մասին՝ Նախիջևանի խնդրով, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարում ելույթի ժամանակ նա նշեց. «ԽՍՀՄ-ում 38 ինքնավար կազմավորումներից միայն երկուսը՝ Նախիջևանը և Ղարաբաղը, կրում են ոչ թե ազգային հատկանիշներով անվանումներ, ինչպես դա պահանջում է սահմանադրությունը, այլ աշխարհագրական»: (11) Իհարկե, դա արդարացված փաստարկ էր, և շատերը դրական արձագանքեցին: Բայց, ինչպես հեղինակն է նշում՝ ապարդյուն, մեջբերելով Գորբաչովի պատասխանը ԽՍՀՄ գերագույն խորհուրդի նախագահ Եվգենի Պրիմակովին, երբ վերջինս խոսել է հարցի տրամաբանական լինելու վերաբերյալ, նա պատասխանել է. «Տրամաբանությունը տրամաբանություն, բայց գլխացավանքից չես ազատվի»: Սա փաստում է, որ խորհրդային ղեկավարությունը որևէ կերպ չէր ցանկանում խոչնդոտել ադրբեջանական գործողություններին:

Ժողովուրդները իրենց պատմության ընթացքում ստեղծում են մշակութային մեծ արժեքներ, որոնք ունեն նաև համաշխարհային, համամարդկային նշանակություն, այդ պատճառով այսօր աշխարհում գործում են միջազգային կառույցներ, որոնք զբաղվում են այդ արժեքների պահպանությամբ և պաշտպանությամբ: Իսկ մի՞թե այդ կառույցները արժանվույնս չէին արձագանքում հայկական մշակույթի ոչնչացմանը, չէին կարող կանխարգելել այդ ամենը: Երևի թե այնպես, ինչպես այսօր միջազգային խաղաղարար կառույցները զբաղվում են Արցախյան հակամարտության կարգավորման հարցով, երբ Ադրբեջանը շարունակում է անպատիժ մնալ իր ագրեսիվ գործողությունների համար, երբ Թուրքիայում և Ադրբեջանում շարունակում են ոչնչացնել կամ յուրացնել հայկական մշակույթը: Գրքում առաջ քաշված հարցերից մեկն է ՄԱԿ-ի արմատական վերափոխումների հարցը: Այդ մասին Ձ. Բալայանը գրում է հետևյալը. «Այսօր աշխարհում շատ փոփոխություններ են եղել ՄԱԿ-ի ստեղծման պահից, և անհրաժեշտ է փոխել ՄԱԿ-ի էությունն ու բովանդակությունը՝ ելնելով տրամաբանորեն ճշգրտված գործունեությունից, որից կախված են աշխարհի բոլոր ժողովուրդների, բոլոր երկրների, մեր ողջ մոլորակի ճակատագիրը: Իսկ մոլորակն այսօր հիշեցնում է Աստվա-

ծաշնչյան Բաբելոնը»:(12) Ասվածը տեղին է, քանի որ աշխարհի երկրների բացարձակ մեծամասնությունը ՄԱԿ-ի անդամ է, սակայն շարունակվում են տեղի ունենալ անօրեն և հակամարդկային գործողություններ, նույնիսկ հենց ՄԱԿ-ի անդամ երկրներում: Այն ժամանակ, իհարկե, դիմել էին անհրաժեշտ քայլերի, ուղարկվել են պաշտոնական դիմումներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ֆրեդերիկո Մայորին՝ պահանջելով ստեղծել միջազգային հանձնաժողովներ՝ փրկելու Նախիջևանի հնագույն պատմա-մշակութային հուշարձանները: «Եվ, իհարկե, խորապես գիտակցում էինք, որ պետք է պահանջենք ու գործենք ողջ ժողովրդով, ողջ Հայաստանով, ողջ աշխարհով, քանզի խոսքն իրոք ցեղասպանության մասին էր (Ջ. Բալայան)»:(13) Սակայն էական արդյունք այդպես էլ չեղավ: Այդ ամենին զուգահեռ զայրացնող է այն հանգամանքը, որ Ադրբեջանը անհիմն հայտարարություններ էր անում և շարունակում է անել՝ նորանոր տարածքային հավակնություններ ցուցաբերելով Հայաստանի նկատմամբ: Ռեալության արժանի է հեղինակի մեջբերումը, ըստ որի Ալիևը 1998թ. Սահմանադրական հանձնաժողովի նիստի ժամանակ ռուսերենով ելույթ ունեցավ՝ մշելով. «Նախիջևանի շրջակա հողերը նույնպես ադրբեջանական էին, բայց չնայած դրան, այնտեղ ապրում էին հայեր: Ճիշտ այնպես, ինչպես նրանք զավթել էին այլ հողեր, օրինակ՝ որոշ հողեր ներկայիս Թուրքիայի տարածքում, կամ ադրբեջանական հողեր՝ Ջանգեզուրի երկրամասը»:(14) Նշվում է նաև, որ Ալիևը խոսեց ադրբեջանական այնպիսի կորուստների մասին, ինչպիսիք են Կապանի և Մեղրիի շրջանները, ինչպես նաև Էրիվանը: Այսպիսի երևույթները, իհարկե բնորոշ են և՛ Ադրբեջանի, և՛ Թուրքիայի իշխանություններին: Այսօր էլ նրանք այդպիսի հայտարարություններ անում են՝ փորձելով իրենց համար վստահելի պատմություն ստեղծել:

Անդրադառնալով Նախիջևանում, Ղարաբաղում տեղի ունեցած ադրբեջանական հալածանքներին՝ հեղինակը ընդգծում է, որ այդ ամենը ակտիվացան հատկապես Գորբաչովի կողմից հայտարարված վերակառուցման քաղաքականությունից հետո: Ըստ նրա՝ Ադրբեջանը մշված «ազատությունները» ընկալեց յուրովի և ձեռնամուխ եղավ իր պատմության հնացմանը: Այդ մասին գրքում մեջբերված է մի հետաքրքիր փաստ, ըստ որի «Սովետական Նախիջևան»(15) թերթում 1986թ. ազերական մի բանասիրական գիտությունների թեկնածու գրում է, թե իբր, թյուրքալեզու ժողովուրդների նախահայրը՝ Նուխը, աստղագետ էր, որը, իմանալով քրիստոսի մասին, նավ կառուցեց, և հետո նկարագրում է, թե ինչպես Նուխը և իր ուղևորները հանգարվանեցին «Ալգարակ» լեռան գագաթին: Այդ բանասերը հորինում է փաստեր, թե իբր Ադրբեջանում հաճախ են հանդիպում տեղանուններ՝ կապված «Նուխ» անվան հետ՝ օրինակ բերելով Նուխրան, Նուխբատան, Նուխաջիր տեղանունները: Այդ առթիվ Ջ. Բալայանը թերթի խմբագրությանը ուղարկեց նամակ՝ ընդգծելով, որ ինքը կարող է ընդունել նրանց հեղինակի գաղափարը, եթե նրանք էլ ընդունեն, որ Հոմերոսը հայ է: Եվ ինքն էլ իր հերթին է օրինակներ բերում՝ մշելով, որ միայն Հայաստանում և Ղարաբաղում են հանդիպում «Հարությունագոմեր», «Պողոսագոմեր», «Նժդեհագոմեր», «Ալեքսանագոմեր» և այդպիսի այլ տեղանուններ: Այս ընդգծումը վերջինս իհարկե արել է հեզմանքով, ինչպես ինքն է մշում, ցույց տալու համար, որ ցանկության դեպքում կարելի է գտնել այլ անվիճելի փաստեր սեփական պատմությունը հնացնելու, ուրիշի պատմությունը յուրացնելու համար: Այսօր էլ նրանք շարադրում են պատմություն և աղավաղում մեր պատմությունը: Մեր պատմաբանների, քաղաքագետների համար առաջին խնդիրներից է՝ վեր բարձրացնել մեր ժողովրդի պատ-

մության իրավական կողմերը:

Նախիջևանի միացումը Ադրբեջանին չափազանց կարևոր նշանակություն ունեցավ թե՛ Թուրքիայի, թե՛ Ադրբեջանի համար: Ասվածի վկայությունն է Ձ. Բալայանի հետևյալ նկատառումը, ըստ որի՝ դեռևս Ալին ավագը խոստովանել է. «Նախիջևանի ինքնավարությունը չափազանց լուրջ գործոն է, որը կարող է օգնել կորցրած մյուս հողերի վերադարձման հարցի լուծմանը: Նախիջևանի ինքնավարությունը պատմական իրադարձություն է Թուրքիայի հետ Նախիջևանի և Ադրբեջանի սահմանի ստեղծման տեսանկյունից»:(16) Գրքում անդրադարձ է կատարվում նաև այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել 70 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղում: Հեղինակը այստեղ նշում է, որ ազերիների հակահայկական գործողությունները նշված տարածքներում հիմնականում սկսվեցին հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Ադրբեջանը, անօրեն կերպով յուրացնելով հայկական հողերը, ամեն ինչ անում էր դրանք հայազրկելու և թուրքացնելու համար: «Այդ ժամանակներից սկսած ադրբեջանցիները փոփոխել են ոչ միայն Ղարաբաղի քարտեզը, այլև ազատագրված տարածքներում՝ Լաչինում, Քարվաճառում, Կուբաթլույում, Ջանգելանում, Ֆիզուլիյում, Աղդամում ընդամենը հետքեր էին մնացել պատմական Հայաստանից: Նույն պատկերն էր նաև Գարդմանքի, Գյուլիստանի երկրամասի ահռելի տարածքներում (Ձ. Բալայան)»:(17) Այս ամենը ևս մեկ անգամ փաստում է Արցախյան շարժման համահայկական նշանակությունը, որ այս տարածքների մի մասը որ անվանում ենք «Արցախի Հանրապետություն» փրկեց հետագա մշակութային և մարդկային ոչնչացումից: Նորից իր ինքնուրույն գոյությունը շարունակեց «Հայոց Արևելից Երկիրը» և նորից դարձավ հայոց պետականության հիմնասյուներից մեկը, ինչպես որ եղել է դարեր շարունակ:

Նախիջևանի հետ կատարվածը ցավալի փաստ է, արդյունքում այսօր Նախիջևանը ամբողջովին հայաթափված է, ոչնչացված են հայկական մշակութային արժեքները, այս դեպքում ավելի դժվար է բարձրացնել Նախիջևանի՝ այնտեղ կատարված ցեղասպանության հարցը և պայքարել դրա համար: Սակայն դա չի նշանակում, թե ոչինչ անել հնարավոր չէ, և չպետք է պայքարել հանուն այդ նպատակի: Այստեղ տեղին են Ձ. Բալայանի խոսքերը. «Նախիջևանի համար սարսափելի չէր դառնալ Ստալին-աթաթուրքյան մենգության զոհ: Դա շտկելի գործ է: Շատ ավելի սարսափելի է, երբ հայրենիքը դառնում է սեփական զավակների մոռացության զոհ»:(18)

Թե՛ Նախիջևանում, թե՛ հայկական այլ տարածքներում հայ ժողովրդի ստեղծած մշակութային ժառանգությունն ունի համամարդկային նշանակություն: Նախիջևանի ադրբեջանական իշխանությունների հակամշակութային քաղաքականության գագաթնակետն էր Երմջակ զավառի հայկական Ջուղա քաղաքատեղիի պատմական գերեզմանատան եղեռնը: 2002թ. դեկտեմբերի 10-14-ին վերջնականապես ոչնչացվեց Ջուղայի գերեզմանատունը: Այդ ոճիրը իրագործեցին Ադրբեջանի բանակի 200 զինվորներ: Նախիջևանի ադրբեջանական իշխանությունները սեփական բանակի մասնակցությամբ ոչնչացրել են հազարավոր հայկական հուշարձաններ՝ խախտելով 1948թ. ՄԱԿ-ի ընդունած պատմաշակութային ժառանգության հռչակագիրը: Երկու-երեք պատմա-ճարտարապետական հուշարձաններից բացի, Նախիջևանի ողջ նյութական մշակույթը Հայ ժողովրդի ստեղծածն է: Ազերիները, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր կիսավայրենի ցեղերի խառնուրդ, չկարողացան Նախիջևանում քիչ թե շատ նշանակալի մշակու-

թային շերտ ստեղծել: 1989-1990թթ. իշխանությունների գործադրած հալածանքների հետևանքով Ադրբեջանը հայաթափվեց, իսկ 300 հազ. հայեր վերածվեցին փախստականների:

Ձ. Բալայանի «Նախիջևանը ցեղասպանության զոհ է» հրատարակությունը վեր է հանում 20-րդ դարի վերջին Նախիջևանի և Ղարաբաղի նկատմամբ կատարված հակամարդկային գործողությունները: Այստեղ ներկայացված են բազում նոր փաստեր և վերլուծություններ, որոնք վստահեցնում և աղբյուր են հանդիսանում կատարվածի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար:

### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Մանասյան Ա., Նախիջևանի հիմնադիր-իրավական և քաղաքական տեսանկյուններ, Եր., 2002, էջ 41:
2. Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի, 1921 մարտի 16, ռուս թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Եր., 2001թ., էջ 292:
3. Հայրենյաց պաշտպան, 2004, հունիս-հուլիս էջ 5:
4. Վարանդյան Մ., ՀՀԴ պատմություն, Երևան, 1992, էջ 313:
5. Ջոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվներ Երևանի նահանգում, 1918թ. Երևան 2000թ., էջ 77
6. <<Ջանգ>>, 1919թ., 21 օգոստոսի:
7. Բալայան Ձ., Նախիջևանը ցեղասպանության զոհ է, Եր. 2017թ., էջ 10
8. Բալայան Ձ., նույն տեղում, էջ 6
9. Նույն տեղում, էջ 6:
10. Նույն տեղում, էջ 29:
11. Նույն տեղում, էջ 46:
12. Նույն տեղում, էջ 60:
13. Նույն տեղում, էջ 9:
14. Նույն տեղում, էջ 10:
15. Նույն տեղում, էջ 26 :
16. Նույն տեղում, էջ 39
17. Նույն տեղում, էջ 13
18. Նույն տեղում, էջ 11:

### **ԱՄՓՈԹՈՒՄ**

#### **ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ «ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՁՈՐ Է» ԳՐԶՈՒՄ**

### **ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հոդվածում քննության է առնվում Ձորի Բալայանի «Նախիջևանը ցեղասպանության զոհ է» գիրքը: Նշվում է, որ հեղինակը գրքում անդրադարձ է կատարում Արցախյան շարժման տարիներին Նախիջևանում հայկական մշակույթի վերացման առավել ակտիվ դրսևորումներին, ինչպես նաև Նախիջևանի հայաթափմանը: Հեղինակը կոչ է անում մեծ ուշադրություն ու դարձնել Նախիջևանի հիմնախնդրին, պահպանել երկրամասի նկատմամբ զենետիկ հիշողությունը, ինչը կնպաստի կայուն խաղաղության ապահովմանը տարածաշրջանում:

РЕЗЮМЕ

ОТРАЖЕНИЕ АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ В КНИГЕ ЗОРИЯ БАЛАЯНА  
"НАХИЧЕВАН – ЖЕРТВА ГЕНОЦИДА"

АЛИК САРГСЯН

**Ключевые слова:** *геноцид, историко-культурологические памятники, Арцахское движение, конфликтные территории, хачкар, ООН, эмиграция, колыбель цивилизации, перестройка, исторические районы.*

В статье анализируется книга Зория Балаяна "Нахичеван – жертва геноцида". Отмечается, что автор затрагивает в книге тему уничтожения армянской культуры в Нахичеване, а также насильственного выселения местных армян в годы Арцахского движения. Автор призывает обращать большое внимание проблеме Нахичевана, сохранить генетическую память в отношении этого края, что послужит обеспечению стабильного мира в регионе.

SUMMARY

THE EXPRESSION OF ARTSAKH MOVEMENT IN  
ZORI BALAYAN'S BOOK  
"NAKHICHEVAN AS A VICTIM OF GENOCIDE"

ALIK SARGSYAN

**Key words:** *Genocide, historical - cultural monuments, Artsakh Movement, disputed regions, Khachqar (cross stone), UNO, emigration, altar of civilization, reconstruction, historical regions.*

The article analyses Zori Balayan's book "Nakhichevan as a Victim of Genocide." It is noted that the author touches upon the abolition of Armenian culture and demolition of Armenians in Nakhichevan during Artsakh Movement. The author invokes us to pay attention to the Nakhichevan problem and to keep genetic memory of the region which will promote sustainable peace in the region.